ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի.

1) Վերին Անտառային փողոցի հ.120 հասցեից մինչև Լեոնիդ Ազգալդյան փողոց ձգվող հատվածն անվանակոչել կոմպոզիտոր, թավջութակահար, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Արտեմի Այվազյանի անվամբ՝ «Արտեմի Այվազյան փողոց»,

2) Լեոնիդ Ազգալդյան փողոցից մինչև Վերին Անտառային փողոցի հ.150/17 հասցե ձգվող հատվածն անվանակոչել կոմպոզիտոր, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Էդվարդ Միրզոյանի անվամբ՝ «Էդվարդ Միրզոյան փողոց»,

3) Վերին Անտառային փողոցի հ.150/17 հասցեից մինչև հ.174/10 հասցե ձգվող հատվածն անվանակոչել կոմպոզիտոր, դիրիժոր, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Կոնստանտին Օրբելյանի անվամբ՝ «Կոնստանտին Օրբելյան փողոց»,

4) Լեոնիդ Ազգալդյան փողոցից մինչև Վերին Անտառային փողոցի հ.128/2 հասցե ձգվող հատվածն անվանակոչել կոմպոզիտոր, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ալեքսանդր Հարությունյանի անվամբ՝ «Ալեքսանդր Հարությունյան փողոց»,

5) Լեոնիդ Ազգալդյան փողոցից մինչև Գոհար Գասպարյան փողոց ձգվող հատվածն անվանակոչել կոմպոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Էդգար Հովհաննիսյանի անվամբ՝ «Էդգար Հովհաննիսյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

ԱՐԹՈՒՐ ԻՍՊԻՐՅԱՆ
ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ
ՀԱԿՈԲ ՄԵԼԻՔՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՆԱԻՐԻ ՓԵԹԱԿՉՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կոմպոզիտոր, թավջութակահար, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ **Արտեմի Այվազյանը** ծնվել է 1902 թվականի հունիսի 26-ին, Բաքվում: Երաժշտական տարրական կրթությունն ստացել է Բաքվի ուսումնարանում: 1923 թվականին ավարտել է Թիֆլիսի կոնսերվատորիան, 1932 թվականին՝ Մոսկվայի կոնսերվատորիան, 1934 թվականին՝ Բարձրագույն վարպետության դպրոցը: Երևանում կոմպոզիցիայի դասեր է առել Ալեքսանդր Սպենդիարյանից: 1927-1930 թվականներին աշխատել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) երաժշտական ստուդիայում՝ որպես տնօրեն: 1933 թվականին դարձել է երաժիշտ-կատարողների համամիութենական առաջին մրցույթի դափնեկիր: 1938 թվականին կազմակերպել է Հայաստանի պետական էստրադային նվագախումբը (հետագայում՝ ջազային), 1938-1956 թվականներին եղել է գեղարվեստական ղեկավարը, 1943-1945 թվականներին՝ Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնի գեղարվեստական ղեկավարը: Ստեղծել է սովետահայ առաջին օպերետները: 1962 թվականին արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստի կոչմանը:

Արտեմի Այվազյանը մահացել է 1975 թվականի նոյեմբերի 14-ին, Երևանում:

Կոմպոզիտոր, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ **Էդվարդ Միրզոյանը** ծնվել է 1921 թվականի մայիսի 12-ին Վրաստանի Գորի քաղաքում: 1941 թվականին ավարտել է Երևանի կոնսերվատորիայի ստեղծագործական բաժինը: 1946-1948 թվականներին կատարելագործվել է Մոսկվայի հայ մշակույթի տան երաժշտական ստուդիայում: 1948 թվականից դասավանդել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, որտեղ 1972 թվականից եղել է ստեղծագործական ամբիոնի վարիչը (1965 թվականից՝ պրոֆեսոր): 1956-1991 թվականներին եղել է Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության (1965 թվականից՝ պատվավոր), 1977 թվականից՝ Հայաստանի խաղաղության հիմնադրամի (2009 թվականից՝ պատվավոր) նախագահը: 1988 թվականին արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության Արամ Խաչատրյանի անվան մրցանակի: 1963 թվականին արժանացել է Հայաստանի, 1981 թվականին՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստի, 2001 թվականին՝ «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչումներին:

Էդվարդ Միրզոյանը մահացել է 2012 թվականի հոկտեմբերի 5-ին, Երևանում:

Կոմպոզիտոր, դիրիժոր, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ **Կոնստանտին Օրբելյանը** ծնվել է 1928 թվականի հուլիսի 29-ին, Ռուսաստանի Արմավիր քաղաքում: Վաղ տարիքից սովորել է Բաքվի կոնսերվատորիային կից երաժշտական հատուկ դպրոցում: 1942 թվականին աշխատել է դաշնակահար և ակորդեոնահար՝ ավիացիոն կորպուսի ջազային խմբում: 1952 թվականից սովորել է Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում: 1961 թվականին ավարտել է Երևանի Կոմիտասի

անվան պետական կոնսերվատորիայի Էդվարդ Միրզոյանի ստեղծագործական դասարանը: 1956-1992 թվականներին եղել է Հայաստանի էստրադային նվագախմբի դիրիժորն ու գեղարվեստական ղեկավարը, 1957 թվականից՝ ԽՍՀՄ կոմպոզիտորների միության անդամ, 1968 թվականից՝ վարչության անդամ: 1993 թվականին տեղափոխվել է ԱՄՆ: 1976 թվականին պարգևատրվել է Բուլղարիայի «Կիրիլ Մեֆոդի», 2003 թվականին՝ ՀՀ «Մեսրոպ Մաշտոց», 2009 թվականին՝ Արցախի «Մեսրոպ Մաշտոց», 2012 թվականին՝ ՀՀ «Պատվո նշան» շքանշաններով, 1996 թվականին՝ Սան Ֆրանցիսկոյի Ա. Էյնշտեյնի անվան մեդալով, 2008 թվականին՝ «Գորիսի պատվավոր քաղաքացի» և «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչումներով: 1974 թվականին արժանացել է Հայաստանի, իսկ 1979 թվականին՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչմանը:

Կոնստանտին Օրբելյանը մահացել է 2014 թվականի ապրիլի 24-ին, Լոս Անջելես քաղաքում: Թաղված է Երևանի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

Կոմպոզիտոր, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ **Ալեքսանդր Հարությունյանը** ծնվել է 1920 թվականի սեպտեմբերի 23-ին, Երևանում: 1927 թվականին սովորել է Երևանի կոնսերվատորիային կից մանկական խմբում, 1934-1941 թվականին՝ կոնսերվատորիայի դաշնամուրի և կոմպոզիցիայի բաժիններում: 1938 թվականին մեկնել է Մոսկվա, ուր ստեղծագործությունները ներկայացրել է Հայաստանի մշակույթի տան դահլիճում: 1939 թվականին դարձել է Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ: 1941 թվականին գործուղվել է Մոսկվայի կոնսերվատորիա՝ կոմպոզիցիայի գծով ուսումը շարունակելու: 1962 թվականից դասավանդել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում (1977 թվականից՝ պրոֆեսոր): 1977 թվականին հայրենասիրական երգերի համար արժանացել է Ա. Ալեքսանդրովի անվան ոսկե մեդալի: 1962 թվականին՝ արժանացել է Հայաստանի, 1970 թվականին՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստի, 1987 թվականին՝ «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչումներին:

Ալեքսանդր Հարությունյանը մահացել է 2012 թվականին, Երևանում:

Կոմպոզիտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ **Էդգար Հովհաննիսյանը** ծնվել է 1930 թվականի հունվարի 14-ին Երևանում:

1953 թվականին ավարտել է Երևանի կոնսերվատորիան, 1957 թվականին՝ Մոսկվայի կոնսերվատորիայի ասպիրանտուրան: 1962-1968 թվականներին եղել է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի տնօրենը, 1970-1974 թվականներին՝ Հայկական ժողովրդական երգի-պարի համույթի, 1979-1984 թվականներին՝ ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի կամերային երգչախմբի գեղարվեստական ղեկավարը, 1986-1991 թվականներին՝ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ռեկտորը:

Էդգար Հովհաննիսյանը 1962 թվականին արժանացել է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի, 1962 թվականին՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստի և 1986

թվականին՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստի, 1998 թվականին՝ «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչումներին:

Էդգար Հովհաննիսյանը մահացել է 1998 թվականի դեկտեմբերի 28-ին, Երևանում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ԱՐԹՈՒՐ ԻՍՊԻՐՅԱՆ**

ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱԿՈԲ ՄԵԼԻՔՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՓԵԹԱԿՉՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում փողոցներ անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ԱՐԹՈՒՐ ԻՍՊԻՐՅԱՆ**

ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱԿՈԲ ՄԵԼԻՔՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՓԵԹԱԿՉՅԱՆ